Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա – Էքսկուրսիաների դերը աշակերտների էկոլոգիական դաստիարակության գործում

Հետազոտող ուսուցիչ՝ Քնարիկ Խաչատրյան Վոլոդյայի

Երազգավորսի միջնակարգ դպրոց

Վերապատրաստումը՝ Բայանդուրի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն..... 3

ԳԼՈՒԽ 1. Էկոլոգիական դաստիարակություն..... 4

1.1 Ի՞նչ է էկոլոգիական կրթությունը..... 4

1.2 Էկոլոգիական դաստիարակության նպատակը.....5

1.3 Էկոլոգիական դաստիարակության խնդիրները.....5

ԳԼՈՒԽ 2. Էկոլոգիայի հիմնական խնդիրները..... 6

2.1 Օդային ավազանի աղտոտման պատճառները: Օդային ավազանի պահպանությունը Հայաստանում.....6

2.2 Մարդածին աղտոտումը.....7

2.3 Բույսերի և կենդանիների բազմազանության պահպանությունը.7

2.4 Ջրային ռեսուրսները և դրանց էկոլոգիական խնդիրները.....8

ԳԼՈՒԽ 3 Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում.....10

3.1 Էքսկուրսիա դեպի անտառ, արտադասարանական պարապմունք..11

Եզրակացություն.....14 **Գրականություն** 15

Ներածություն

Վերջին տարիներին էկոլոգիան ճգնաժամային վիճակում է գտնվում, և դա տարեց տարի ավելի է սրվում և խորանում: Հարցին գրագետ և հետևողական ուշադրություն դարձնելու համար էկոլոգիական ինքնագիտակցությունը երեխաների մոտ պետք է ձևավորել դպրոցից: Կազմակերպելով տարբեր բնույթի էքսկուրսիաներ:

Երեխաներին դպրոցում պետք է սովորեցնել բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքներին՝ բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը:

Բոլորիս տունը նախ առաջինը երկիր մոլորակն է, որն այսօր մեանից պահանջում է երեխայի նման խնամք և ուշադրություն: Այսօր նաև պետք է կարևորել դպրոցներում էկոլոգիական կրթությունը: Դպրոցներում աշակերտների էկոլոգիական դաստիարակության խնդրում շատ կարևոր է արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիաների կազմակերպումը, որի ընթացքում աշակերտների մոտ զարգանում է սեր դեպի բնությունը, հետաքրքրություն է առաջանում մոտիկից ավելի լավ ճանաչել բնությունը, մասնակցել բնության պահպանության խնդիրների լուծմանը: Էկոլոգիական դաստիարակությունը պետք է լինի շարունակական և դպրոցում, և տանը, քանի որ էկոլոգիական խնդիրները բազմաթիվ են, որոնք պահանջում են հրատապ լուծումը; Յուրաքանչյուրիս պարտքն է պահպանել բնությունը, որը ամրագրված է նաև օրենքով, վերականգնել խաթարված էկոլոգիական համակարգերը: Անձի էկոլոգիական կրթությունը, բխում է մարդ, հասարակություն, բնություն փոխազդեցության պահանջներից: Որը երեխայի մոտ ձևավորվումը է ընտանիքում, ապա մանկապարտեզում , որը շարունակվում է արդեն դպրոցում:

ԳԼՈՒԽ 1. Էկոլոգիական դաստիարակություն

1.1 Ի՞ՆՉ Է ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր գիտելիքները, կարողությունները և հմտությունները, արժեքային կողմնորոշումները մարդկային հասարակությունը ձեռք է բերում էկոլոգիական կրթության և դաստիրակության շնորհիվ: Եվ սովորում են ինճպես պահել ու պաշտպանել բնությունը, որտեղ ապրում են, առանց որի մարդկային հասարակությունը չի կարող ապրել և գայատևել: Յուրաքանչյուրս պետք է և պարտքն է պահպանել բնությունը, փորձել իր ուժեր ներածին չափով վերականգնել խաթարված էկոլոգիական համակարգերը:: Անձի էկոլոգիական կրթությունը, մշակույթը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է «մարդ, հասարակություն, բնություն» փոխազդեցության պահանջներից: Էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների և հմտությունների համակարգ է, որը միտված է երեխաների մեջ շրջապատող բնական աշխարհի, երևույթների, նրա օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների և պատկերացումների, բնաճանաչողական ընդունակությունների, իմացական հետաքրքրությունների, էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Աշակերտները պետք է գիտակցեն, որ մեր հայրենիքը մեր մոլորակի փոքրիկ մասնիկն է, որը ունի բազում էկոլոգիական խնդիրներ և ունի բոլորիս օգնության կարիքը: Էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով, որը պետք է ձևավորել երեխայի մոտ տանը, մանկապարտեզում և ավելի խորացնել գիտելիքը դպրոցում: Որն էլ կձևավորի աշակերտի մոտ էկոլոգիական մտածողություն: Էկոլոգիական դաստիարակության հաջող կազմակերպման համար անհրաժեշտ է հստակեցնել նպատակներն ու խնդիրները:

1.2 Էկոլոգիական դաստիարակության նպատակը

1. Անձի էկոլոգիական կրթությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է «Մարդ-հասարակություն-բնություն» փոխազդեցության պահանջներից:

2. Էկոլոգիական կրթության նպատակն է էկոլոգիական գիտելիքների կաողությունների և հմտությունների ձեռք բերումը:

1.3 Էկոլոգիական դաստիարակության խնդիրները

1. Էկոլոգիական գիտելիքների և դաստիարակության բարձրացում:
2. Էկոլոգիական ուսուցման և էկոլոգիական կուլտուրայի ձևավորման ու զարգացման իրավական, սոցիալ-տնսեսական, այլ երաշխիքների ապահովումը:
3. Գոյություն ունեցող տեղեկատվական ու կրթական կառույցների համակարգում առաջացած խնդիրների կենսագործման մեխանիզմների ապահովումը:
4. Օրենք, որը չի գործում:

ԳԼՈՒԽ 2. Էկոլոգիայի հիմնական խնդիրները

Էկոլոգիական հիմնախնդիրները բազմաթիվ են, սակայան առանձնանցվում է դրանց խումբ, որոնք պահանջում են հրատապ լուծում և ամբողջ աշխահրի մարդկնց համատեղ ջանքեր: Այլ կերպ դրանց անվանում ենք համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրներ: Ժամանակակից էկոլոգիայում խնդիրները շատ բազմազան են կախված կլիմայի փոփոխության և մարդածին գործոնի, մարդկանց թվի ավելացման հետ: Էկոլոգիայի կարևոր խնդիրներն են՝ օդային ավազանի աղտոտումը, մարդածին աղտոտումը, կենդանիների բազմազանության պահպանությունը, բույսերի բազմազանության պահպանությունը, ջրային ռեսուրսները և դրանց խնդիրները:

2.1 Օդային ավազանի աղտոտման պատճառները

Օդային ավազանի աղտոտող գործոնները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ ստացիոնար կամ անշարժ աղտոտողներ (ջերմաէլեկտրակայանները և այլ արդյունաբերական ձեռնարկությունները) և շարժական աղտոտողներ

(հիմնականում տրանսպորտային միջոցներն են): Օդի աղտոտման աղբյուրները կարելի է դասակարգել նաև ըստ մարդու գործունեության ոլորտների՝ կենցաղ, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն: Փոխադրամիջոցներ Օդի աղտոտման շատ ծանրակշիռ պատճառ են փոխադրամիջոցները՝ մեքենաները, ինքնաթիռները և այլն: Տրանսպորտային միջոցները երկակի բացասական ներգործություն ունեն շրջակա միջավայրի վրա՝ վառելիքի այրման համար ծախսում են մթնոլորտի թթվածինը (լրացուցիչ ասենք, որ 1 ավտոմեքենան 100 կմ/ժ արագությամբ ընթանալիս այրում են այնքան թթվածին որքան մարդը օգտագործում է 1 օրվա ընթացքում): Այրման թունավոր արգասիքները արտանետվում են մթնոլորտ: Սակայն առանձին վայրերում՝ հատկապես արդյունաբերական քաղաքներում օդ է արտանետվում ոչ պիտանի, վնասակար նյութեր, թունավոր գազեր և այլն: Օդի աղտոտման առավել աննպաստ հետևանքներից են ջերմոցային էֆեկտը, թթվային անձրևները, ծխածածկույթը: Մթնոլորտ արտանետված գազերը, փոշին և մուրը ջրային գոլորշիների վրա առաջացնում են կայուն համակարգեր, միացություններ, հեղձուցիչ մառախուղ, որը մեծ քաղաքների համար չարիք է: Ընդհանրապե գիտության զարգացման հետ զուգահեռ մեր երկիր մոլորակը լուրջ էկոլոգիական ճգնաժամի առջև է կանգնում: աղտոտված օդային ավազանն էլ իր հերթին ազդում է և պատճառ է հանդիսանում օզոնային շերտի քայքայման: Իսկ օզոնոյին շերտի պահպանումը համամոլորակային էկոլոգիական խնդիրներից է: 1995թ.մոտ 150 երկիր, 1997թ. 163 երկիր Մոնրեալում ստորագրեցին «Մոնրոելյան արձանագրությունը» միջազգային համաձայնագիրը օզոնային շերտը քայքայող նյութերի իսպառ վերացման կամ դրանց արտադրությունը խիստ կրճատելու վերաբերյալ:

<u>Օդային ավազանի պահպանությունը Հայաստանում</u>

Հայաստանի մակերևույթի լեռնային բնույթը, կլիմալական պայմանները, միջլեռնային գոգավորությունները, բարձր սեյսմիկությունը, անտառասակավությունը ուղղակիորեն ազդում են մթնոլորտի մաքրության վրա: Եթե դրան ավելացնենք մարդու տնտեսական գործունեությունը, ապա օդային ավազանի անաղարտությունը դառնում է ավելի խոցելի:

Մեր երկրում առավել աղտոտված օդային ավազան ունեն Երևանը, Արարատը, Վանաձորը, Ալավեդին և Հրազդանը:

Քաղաքներին հարող տարածքներում տարվա ընթացքում 2-3 ամիս առաջանում է ջերմաստիճանային շրջադասություն և ստեղծվում է նպաստավոր պայմաններ օդային ավազանի աղտոտման համար:

2.2 Մարդածին աղտոտումը

Մարդկությունը իր գործունեությամբ հարյուրավոր տարիների ընթացքում ազդում է բնության վրա, խախտում է հավասարակշռությունը, աղտոտում է միջավայրը, դարձնում պակաս նպաստավոր, իսկ առանձին դեպքում մարդկանց և կենդանի օրգանիզմների համար վտանգավոր : Ախտոտման ամենատարածված աղբյուրներն՝ շինարարությունը, հանքարդյունաբերական ձեռնարկությունները: Մարդածին աղտոտումը բաժանվում է երեք խմբի՝ կենսաբանական, մեխանիկական, քիմիական: Կենսաբանական աղտոտման պատճառներն են՝ բակտերիաները, սնկերը, կապտականաչ ջրիմուռները և մարդու համար վտանգավոր նյութերը: Մեխանիկական աղտոտման պատճառներն են՝ փոշին, կենցաղային թափոնները: Քիմիական աղտոտման պատճառներն են՝ բոլոր տեսակի քիմիական տարրերն ու միացությունները, որոնք միջավայրի հետ փոխազդեցության մեջ են մտնում, թթուները, հիմքերը, պլաստմասաներ, CO, SO_2 և այլն:

2.3 Բույսերի և կենդանիների բազմազանության պահպանությունը

Բույսերի և կենդանիների բազմազանության պահպանությունը էկոլոգիայի կարևոր խնդիրներից են: 17-րդ դարից սկսած երկրի երեսից անհետացել են՝ ձկներ - 23 տեսակ , սողուններ -28 տեսակ, թռչուններ -130 տեսակ, կաթնասուններ - 83 տեսակ: Կենդանիների բազմազանության, դրանց առանձին տեսակների պահպանության մեթոդներն ու միջոցառումները բազմազան են: Այդ միջոցառումներն բազմազան են: Բուսատեսակները և կենդանատեսակները պահպանելու համար ստեղշել են հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ, ազգային պարկեր որտեղ պահվում են այն բուսատեսակներն ու կենդանատեսակները որոնք գտնվում են ոչնչացման եզրին և գրանցված են «Կարմիր գրքերում»: Միջոցառումը կազմակերպելու համար անհրաժեշտ է նախ և առաջ բացահայտել այն բուսատեսակները և կենդանատեսակները որոնք ոչնչացման վտանգի տակ են: Երկրագնդի բուսական ռեսուրսների կազմում

առանձնահատուկ տեղ է գրավում անտառների պահպանությունը: Երկրագնդի կենդանի բուսազանգվածը կազմում է 1770 մլրդ տոննա, որից 1640 մլրդ տոննան, այսինքն 93% բաժին է ընկնում անտառներին: Աշխարհի երկրների մեծ մասում տեղի է ունենում անտառների անխնա շահագործում, անտառների ոչնչացում: Այդ պատճառով անտառային տարածքները տարեցտարի պակասում են: Անտառային տարածքներին մեծ վնաս են հասցնում անտառային հրդեհները, որոնց ցուցանիշը տարեցտարի ավելանում է պայմանավորված գլոբալ տաքացմամբ: Դրա պանճառներից մեկը անտառապատ տարածքների կրճատում է, որի հետևանքով մթնոլորտում ավելանում է O_2-ի քանակը, որի հետևանքով ավելանում է CO_2-ի քանակը և տեղի է ունենում կլիմայի տաքացում: Անտառապատ տարածքների կրճատման հետևանքով ուժեղանում է հողերի էռոզիան, անապատացումը, քայքայվում է բնական էկոհամակարգը, ավելանում են երաշտները: Ուժեղանում է ջրային հոսքը, ավելանում է ջրհեղեղների քանակը: Եվ հիմա մեր մոլորակը գնում է դեպի գերտաքացման, ներկա իրավիճակը բխում է մարդկային գործոնի բացասական ազդեցությունից:

2.4 Ջրային ռեսուրսները և դրանց էկոլոգիական խնդիրները

Ջուրը կյանքի աղբյուր է, ջրի պաշարները սահմանափակ են : Ջրային ռեսուրսը համարվում է անսպառ, բայց ունենք որակական սպառման խնդիր: Քաղցրահամ ջրի սակավությունը համաշխարհային խնդիր է: Քաղցրահամ ջրային պաշարների հիմնական աղբյուրներն են գետերը, լճերը և ճահիճները: Քաղցրահամ ջրային պաշարների շուրջ մեկ երրորդը կենտրոնացած է Հարավային Ամերիկայում, չորրորդ մասը՝ Ասիայում, իսկ հետխորհրդային երկրները կազմում են մի փոքր ավելի՝ 20%-ը: Եվ միայն մոտ 2%-ը կենտրոնացած է Միջին Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: Երկրագնդի բնակչության թիվն օրեցօր աճում է, և դրան զուգահեռ աճում է ջրի պահանջարկը: Օրինակ՝ Եվրոպան կազմում է աշխարհի բնակչության 20% -ը, մինչդեռ ջրային պաշարներն ընդամենը 7% են:

Քաղցրահամ ջրի սակավությանը նպաստել են ոչ միայն բնական գործոններն, այլև մարդու գործունեությունը, որը հանգեցրել է ոչ միայն ջրային պաշարների կրճատմանն, այլև որակի վատթարացմանը: Որքան շատ է աղտոտված շրջակա միջավայրն, նույնքան աղտոտված են ջրային պաշարները: Էկոլոգիական խնդիրները փոխկապակցված են՝ ջրային գործոնի առկայությունն ուղղակիորեն կապված է նաև կենդանական աշխարհի շատ տեսակների գոյության հետ: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների ամեն

տարի ջրի պատճառով մահանում է 3.5 մլն մարդ: Ջրային ռեսուրսները արդյունավետ օգտագործման և պահպանության կարևոր ուղղություն է ջրի խնայողաբար օգտագործումը: Դա հատկապես մեծ նշանակություն ունի գյուղատնտեսական ոռոգման, քաղաքների և գյուղերի ջրամատակարարման համար:

ԳԼՈՒԽ 3. Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում

Բնությունը քաղաքակրթության պատմության բոլոր ժամանակաշրջաններում էլ եղել է մարդկանց հավերժական դաստիարակը, ըստ որում ոչ միայն գեղագիտական, այլ բարոյական, աշխատանքային, ֆիզիկական: Բնության հետ շփվելը մարդուն դարձնում է՝ մեղմ, բարի, նրա մեջ արթնացնում է գեղեցիկի, վեհի զգացմունքներ, դաստիարակում է բնության զգացողություն ու ճաշակ: Սերը դեպի բնությունը, հոգատար վերաբերմունքը, կենդանի էակների նկատմամբ դաստիարակում են բնավորության դրական գծեր՝ բարություն, հետաքրքրասիրություն, հայրենասիրություն:

Դպրոցում այն կազմակերպում են ակտիվ ուսուցման մեթոդներով; Դասի կազմակերպման հիմնական ձևը տեսական և գործնական պարապմունքներն են: Ուսուցման ձևերից են արտադասարանական պարապմունքները, միջոցառումները, էքսկուրսիաները, բուսաբանական և կենդանաբանական այգիները, արգելավայրեր և արգելոցներ: Տարրական դասարաններում երեխաները էկոլոգիական գիտելիքներ ստանում են, «Ես և շրջակա աշխարհը» առարկայից : Ավելի բարձր դասարաններում բնագիտությունից, որն էլ տրոհվում է հետագայում բնագիտական առարկաների: Տարական դասարանում կարելի է երեխայի հետ մշակել, խնամել բույսեր, որը երեխայի մոտ կձևավորի սեր դեպի բնությունը: Իսկ ամեն գարնանը V-XII դասարանի աշակերտների հետ կազմակերպում ենք գարնանային ծառատունկ դպրոցի այգում: Ծառատունկից հետո կազմակերպեցինք փոքրիկ միջոցառում «Մենք են բնության տերը» խորագրով:Միջոցառումից հետո նրանք խոստացան, որ այդ այգին իրենք են մշակելու և պիտի բոլորին սովորեցնեն հարգել բնությունը: Իսկ արդեն աշնանը աշակերտները որոշեցին մաքրել այգին տերևներից ու չոր ճյուղերից: Նրանք շատ մեծ ուրախությամբ մաքրեցին այգին, դպրոցի հարակից տարածքը: Աշխատանքը ավարտելուց հետո լույս ընծայեցին պատի թերթ, որտեղ անդրադարձան շրջակա միջավայրի հարցերին:

1. Աղբի խնդիրը բնապահպանական այն լուրջ խնդիրն է, որի լուծմանը կարող է նպաստել յուրաքանչյուրը:
2. Իմանանք շրջակա միջավայրի նկատմամբ մեր պարտականությունները:
3. Կրճատենք աղբի քանակը, ամեն մի իր դեն նետելուց առաջ մտածենք:
4. Իմանանք շրջակա միջավայրի մասին տեղեկություն ստանալու ձևերն ու իրավունքները:
5. Պահանջենք կառավարությունից մասնակցել մեր առաջարկած էկոլոգիական միջոցառումներին:
6. Փորձենք լուծել մեր խնդիրները ինքներս:

   Երեխաները որոշեցին, որ պետք է նվազեցնեն պլաստիկ շշերի , պոլիէթիլենային տոպրակների օգտագործումը: Նրանք հավաքված թափոնները և դրանիցից գեղեցիկ իրեր պատրաստեցին, մի խումբ աշակերտուհիներ էլ շորից տոպրակներ կարեցին և նվիրեցին թաղի բնակիչներին:

3.1 Էքսկուրսիա դեպի անտառ, արտադասարանական պարապմունք

Որոշեցինք 9-րդ դասարանի երեխաների հետ էքսկուրսիա կատարել դեպի անտառ:

Կազմեցինք հարցաշար և անցկացրեցինք հարցում: Էքսկուրսիայի և զբոսանքի ժամանակ անցկացվող զրույցները, բացի իմացական գիտելիքներից, երեխաների մետ ձևավորեցին որոշակի վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ: Էքսկուրսիայից առաջ կազմեցի հարցաշար:

1. Բույսերն ու կենդանիները ունե՞ն արդյոք պաշտպանության կարիք:
2. Կարևոր է՞ արդյոք էկոլոգիական կրթություն ստանալ դպրոցում:
3. Կարևոր է՞ անտառների պահպանությունը մարդկության համար:
4. Գիտեք արդյոք էկոլոգիական խնդիրներ:
5. Կարևոր է պահպանել անտառը և ինչու:
6. Անտառային հրդեհները և մասսայական անտառահատումները կարող են վնաս հասցնել անտառներին:
    1. Առաջին հարցին դասարանի բոլոր երեխանները պատասխանեցին նույն ձևով նրանց կարծիքով , այո, բոլոր կենդանիներն ու բույսերն ունեն պաշտպանության կարիք:
    2. Երկրորդ հարցին երեխաները պատասխանեցին այո, բայց չկարողացան բացատրել ՝ ինչու՞:
    3. Երրորդ հարցին երեխանները պատասխանեցին՝ այո, անտառների պահպանությունը կարևոր է մարդկության համար:
    4. Չորրորդ հարցին պատասխանեցին՝ ոչ , բավականին տեղեկացված չեն, մի մասն էլ պատասխանեց՝ այո, լավ տեղեկացված է:
    5. Հինգերորդ հարցին երեխանների մի մասը չունեին հստակ պատասխան, մի մասն էլ պատասխանեց ՝ այո, կարևոր է անտառի բազմազանությունը մարդու և բնության համար:
    6. Վեցերորդ հարցին երեխաներից մի քանիսը պատասխանեցին՝ ոչ, մի քանիսը համոզված չէին իրենց պատասխանների մեջ, դասարանի մնացած երեխանների կարծիքով այս անտառահատումները և հրդեհները կարող են մեծ վնաս հասցնել անտառներին:

Աշակերտների հետ անցկացրեցինք զրույց անտառների դերի և նշանակության մասին, անցկացրեցինք զրույց և հարցում արդյոք էքսկուրսյան նպաստում է էկոլոգիական դաստիրակությանը:

Հայաստանը համարվում է անտառներով աղքատ երկիր: Հայաստանի տարածքի միայն 10-% է ծածկված անտառներով: Վերջին տարիներին մարդկանց կողմից անխնա կատարվող անտառահատումները բերեցին նաև անտառում ապրող շատ կենդադանիների, թռչունների ոչնչացմանը: Իսկ անտառի դերն ու նշանակությունը շատ մեծ է ամբողջ մարդկության համար: Անտառները համարվում են երկրագնդի թոքերը, օդը հարստացնում են O_2-ով: Ինչքան շատ անտառներ ունենանք, այնքան օդը մաքուր կլինի: Անտառում աճուն են շատ պտղատու և հատապտղատու ծառեր, ծառերի շատ տեսակներ, որոնք արժեքավոր փայտ ունեն: Անտառը մարդկանց համար համարվում է եկամտի և ապրուստի միջոց: Այդ նպատակով աշակերտները պետք է մասնակցեն անտառապահպան միջոցառումներին: Մեր երկիրը պլանավորված պայքարում է անտառահատումների դեմ: Աշակերտներին շատ հետաքրքրեցին անտառին վերաբերող խնդիրները, որոշեցին, որ փայտի փոխարեն կարելի է օգտագործել վառելիքի այլ տեսակներ: Օրվա վերջում երեխաները խնամքով մաքրեցին այն տարածքը, որտեղ իրենք նստել էին, աղբը հավաքեցին ու հեռացրեցին անտառից: Երեխաների մոտ արդեն կար ձևավորված էկոլոգիական մշակույթ:

Էքսկուրսիայից հետո երեխաները պատասխանեցին նույն հարցերին(հարցաշարին)

- Առաջին հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛: Նրանց կարծիքով կենդանիներն ու բույսերը ունեն պաշտպանության կարիք:
- Երկրորդ հարցին նույնպես պատասխանեցին- այո՛, Բայց արդեն նրանց կարծիքով էկոլոգիական կրթությունը անհրաժեշտ է երեխաների համար, որպեսզի իրենք ճիշտ վերաբերմունք ցույց տան անտառի բույսերին և անտառում ապրող կենդանիներին, և որ կարողանան նաև իրենց երեխաներին սովորեցնեն:
- Երրորդ հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛, Նրանց կարծիքով, անտառը մարդկանց համար և՛ սննդի աղբյուր է, և՛ ապրուստի միջոց, և՛ հանգստյան գոտի:
- Չորրորդ հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛, Նրանք լավ տեղեկացված են և նրանց կարծիքով այդ խնդիրները պետք է ավելի շատ մեկնաբանվեն:

- Հինգերորդ հարցին բոլորը պատասխանեցին – այո՛: Նրանց կարծիքով օդը O_2 հարստացնողը, փոշուց և միկրոօրգանիզմներից մաքրողը անտառն է:
- Վեցերորդ հարցին աշակերտները պատասխանեցին- այո՛: Նրանց կարծիքով հրդեհների պատճառով կարող են այրվել հարյուրավոր հեկտար անտառներ, ծխի պատճառով օդը կարող է աղտոտվել CO CO_2 գազերով, կոչնչանան մեծ թվով կենդանիներ, միջատներ, թռչուններ և այլն: Անտառահատուների պատճառով կարող է փոխվել նյութերի շրջապտույտը:
- Անտառը պաշտպանելու համար երեխաները առաջարկեցին պայքարել ապօրինի անտառահատումների դեմ, հրդեհների ժամանակ անմիջապես հանգցնել կրակը, թույլ չտալ որ հրդեհը տարածվի: Անտառների բարիքներից օգտվել չափավոր, այնպես որ չխախտվի նյութերի շրջապտույտը անտառում, որը ի վերջո կարող է հասցնել անտառների աչնչացմանը:

Այսպիսով երեխաների մոտ սոցիալական հարցում անցկացնելուց հետո եկանք այն եզրակացության, որ երեխաները ձեռք բերեցին բավարար քանակի գիտելիք շրջակա միջավայրի , անտառի, բնության մասին: Հասկացան անտառի դերն և նշանակությունը մարդկության և բնության համար:

Եզրակացություն

Հարցում կատարելու ընթացքում եկանք այն եզրակացության, որ.

1. Երեխաները արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիաների ժամանակ ձեռք են բերում բավարար քանակի գիտելիքներ շրջակա միջավայրի, մասին:
2. Սիրեցին բնությունը, բույսերին, կենդանիներին: Իմացան անտառի դերի և նշանակության մասին բնության և մարդկության համար:
3. Երեխանները գիտակցեցին բնապահպանության գործունեության անհրաժեշտությունը մեր ժամանակներում, որը դարձել է համամարդկային հիմնախնդիր:
4. Ուսուցիչները կարևորեցին էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում:
5. Երեխանները 12- ամյա կրթության ընթացքում ձեռք են բերում գիտելիքներ, որոնցով ճանաչում են բնությունը, արտադասարանական պարապմունքների ժամանակ ձեռք են բերում փորձնական գիտելիքներ, որը ավելի կարևոր է և իրենց ամբողջ կյանքի ընթացքում նմանատիպ դասերը ավելի լավ են հիշում և կիրառում:
6. Երեխաները ԿԳՄՍ նախարարությանը առաջարկում են բնագիտական առարկաներին ավելի շատ գործնական աշխատանքի ժամեր տրամադրել, որի ժամանակ կարելի է նաև կարճաժամկետ և մոտ տարածքներում էքսկուրսիաներ կազմակերպել:
7. Էքսկուրսիանները երեխանների մեջ զարգացնում են ուսումնասիրելու, հետազոտելու կարողություններ:
8. Հարցումից պարզ դարձավ նաև արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիանների անցկացումը շատ կարևոր է աշակերտների էկոլոգիական դաստիարակության համար:

Օգտագործված գրականություն

1. Մելանյա Դավթյան -«Շրջակա միջավայր և բնապահպանություն»- 2010թ.
2. Ա.Գասպարյան, Ռ Մկրտչյան, Լ.Վալեսյան «Բնօգտագործում և բնապահպանություն»- 1999թ
3. Ա. Գևորգյան, Դ. Դանիելյան, Գ. Սևոյան - «Կենսաբանություն 12 »- 2011թ.
4. Ա. Աջամօղլյան - «Էկոլոգիական հանրակրթության հիմնախնդիրները» 2004թ.
5. Համացանց –https://www.google.com/
6. Ակսել Պոտոսյան, Մաքսիմ Մանասյան «Աշխարհագրություն 11» 2023թ.